

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դասվար

Թեմա — Նախագծային տեխնոլոգիան որպես աշակերտի  
ինքնագործունեության միջոց

Կազմեց՝ Շուշան Արտոյի Ավետիսյան  
«Ազարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Կապան 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ -----	3
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ -----	4
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ. ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՓՈՒԼԵՐԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ -----	6
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՇԱԿՈՒՄ -----	11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ -----	14
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ -----	16

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ մայրենիի տարրական դասընթացի խնդիրը կրտսեր դպրոցականների տրամաբանության, մտածելակերպի, համագործակցային տարրական կարողությունների, համակեցության պարզ ունակությունների ձևավորումն է, ազգային համամարդկային արժեքների դաստիարակությունը: Այսօր անառարկելիորեն ընդունվում է այն դիրքորոշումը, որ կրտսեր դպրոցը միայն գիտելիքների ձեռքբերման օղակ չէ: Գիտելիքի ուսուցման այս փուլը դիտարկվում է որպես անձի զարգացման միջոց: Այսինքն՝ կրտսեր դպրոցում պիտի կարևորել ոչ թե գիտելիքների մեծածավալ հաղորդումը, այլ դրանց՝ երեխաների կողմից յուրացման ձևերը, գործածման արդյունավետությունը, հետագա ուսումնական գործունեության ծավալման և երեխաների բարձրակարգ մտածողության ձևավորման համար պիտանելիությունը: Այս խնդիրների իրականացումը պահանջում է, որ ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու միջոցները համապատասխանեցվեն կրտսեր դպրոցականների՝ ստեղծագործական, մտավոր գործունեություն ծավալելու կարողությունների ձևավորման նպատակներին: Այս ամենին հասնելու համար այսօր անհնար է պատկերացնել ուսուցումը առանց մեթոդների կիրառման: Իհարկե հնարավոր է, որ դրանք լինեն արդարացված և չարդարացված: Այսօր բազմաթիվ հիմնական մեթոդական նորարարություններ կապվում են ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման հետ: Ուսուցումը ինչ-որ իմաստով նշանակում է գրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի կամ համակարգչի հետ: Այսպիսով, ժամանակակից ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության, համագործակցության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման, սովորողի ազատության վրա: Ժամանակակից ուսուցման հիմնական բնութագրիչներից մեկը ուսուցման միջավայրն է, որտեղ երեխան զգում է իր մասնակցության և անձի կարևորությունը, ինչը ուսուցման գործընթացը դարձնում է արդյունավետ:

Հետազոտական աշխատանքում ներկայացվում է ուսուցման արդյունավետ տեխնոլոգիաներից մեկը՝ ուսուցման նախագծային տեխնոլոգիան, որի գլխավոր նպատակները է ստեղծագործ անձի ձևավորումը: Աշխատանք բաղկացած է 3 ենթավերնագրից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

## **ՈՒՍՈՒՑԱՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ**

«Տեխնոլոգիա» բառը ծագում է հունարեն «Techné» և «Logos» բառերի ձուլումից: «Techné», այսինքն՝ արվեստ, հմտություն, կարողություն և «Logos»՝ գիտություն, օրենք: Բառացի «տեխնոլոգիա» նշանակում է հմտության գիտություն:

Աշակերտի ճանաչողական և ստեղծագործական գործունեության իրականացման համար, ուսուցման գործընթացում օգտագործվում են ժամանակակից ուսուցման արդյունավետ տեխնոլոգիաները, որոնք նպատակ ունեն կազմակերպել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են: Այսպիսի ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն՝ հանգամանքների և իրավիճակների վերլուծության հիման վրա, տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտիվ գործունեության: Այդ իսկ պատճառով դասի կառուցվածքի մեջ ներառվում են ուսուցման ինտերակտիվ մոդելի միայն տարրեր՝ ինտերակտիվ տեխնոլոգիաներ, այսինքն՝ կոնկրետ ձևեր և մեթոդներ, որնք թույլ են տալիս դարձնել դասն անսովոր և ավելի հազեցած ու հետաքրքիր: Ցանկացած մանկավարժական տեխնոլոգիա պարունակում է միջոցներ, որոնցով ակտիվացվում և ինտենսիվանում են սովորողների գործունեությունները, սակայն կան տեխնոլոգիաներ, որոնցում այդ միջոցները ներկայանում են որպես հիմնական գաղափարի արտահայտիչներ և արդյունավետության երաշխավորներ:

Ուսուցման արդյունավետ տեխնոլոգիաների նպատակներն են՝

- սովորողների անհատական մտային գործընթացների ակտիվացում
- սովորողի մեջ ներքին երկխոսության հարուցում
- տեղեկատվության ըմբռնման ապահովում
- մանկավարժական փոխգործակցության անհատականացում
- սովորողների միջև տեղեկությունների փոխանակման ժամանակ երկկողմանի կապի կայունությանը հասնելը:

Այս տեխնոլոգիաները հիմնված են ուսումնական շրջապատի հետ սովորողների ուղղակի փոխազդեցության վրա: Ուսումնական շրջապատը հանդես է գալիս որպես իրականություն, որում սովորողն իր համար գտնում է յուրացվող փորձի ոլորտ:

Ավանդական ուսուցման ժամանակ ուսուցիչը խաղում է ուսումնական տեղեկությունն իր միջով անցկացնող «գտիչի» դեր, ինտերակտիվի ժամանակ՝ աշխատանքում օգնականի դեր, ով ակտիվացնում է տեղեկությունների փոխուղղված հոսքերը: Ավանդականների հետ համեմատած, ուսուցման արդյունավետ տեխնոլոգիայում փոխվում է նաև փոխգործակցությունն ուսուցչի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում սովորողների ակտիվությանը, ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաաձեռնության համար: Այստեղ սովորողները հանդես են գալիս որպես լիիրավ մասնակիցներ, նրանց փորձը պակաս կարևոր չէ ուսուցչի փորձից: Վերջինս ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը: Ուսուցիչը հանդես է գալիս մի քանի հիմնական դերերով: Նրանցից յուրաքանչյուրում նա կազմակերպում է մասնակիցների փոխգործողությունը տեղեկատվական միջավայրի այս կամ այն հատվածի հետ: Ուսուցիչը իր աջակցողի, օգնողի դերում կազմակերպում է սովորողների փոխգործակցությունը շրջապատի հետ, այսինքն՝ բաժանում է խմբերի, խթանում է նրանց ինքնուրույն սովյալներ հավաքելը, համաձայնեցնում է առաջադրանքների կատարումը, փոքրիկ շնորհանդեսների նախապատրաստում և այլն:



Ուսուցման այնպիսի տեխնոլոգիաները հենվում են իմացական գործունեության նպատակների ու դրդապատճառների, ուսուցման մեխանիզմների մասին արդի գիտելիքների ամբողջության վրա՝ ունենալով գլխավոր նպատակը՝ անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրականացում:

Արդի դպրոցում ուսուցումը կոչված է կատարելու իր զարգացնող և ինքնագիտակցման կարողություններ ձևավորող գործառույթը: Ուրեմն, պետք են ուսուցման այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում սովորողների ակտիվության, ինքնուրույնության և նախաձեռնողականության ձևավորման համար, զարգացնում առաջին հերթին ընդհանուր գիտական կարողությունները:

Մարդ ստեղծագործական որակներ է ձեռք բերում՝ ներգրավվելով ստեղծագործական գործընթացում: Այս առումով կա ուսուցման տեխնոլոգիա, որի նպատակներից է ստեղծագործ, ինքնուրույն անձի ձևավորումը:

## **ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ, ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՓՈՒԼԵՐԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

Գիտության, տեխնիկայի, հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները չէին կարող իրենց ազդեցությունը չունենալ կրթական ոլորտի՝ մասնավորապես դպրոցական համակարգի վրա: Սոցիումի պահանջներից ելնելով՝ ուսումնական հաստատության խնդիրն է դառնում բացահայտել սովորողների ներուժը, տալ բազմակողմանի հնարավորություններ դրսևորվելու, նախասիրությունները զարգացնելու, մասնագիտական կողմորոշում ստանալու:

Այստեղ պետք է ձևավորվեն ազատ, մտածող անհատներ, ովքեր կկարողանան ինքնադրսևորվել, ազատ ու անկաշկանդ արտահայտվել: Այս ամենը ունենալու համար կրթական համակարգի փոփոխություններում հարկավոր է հաշվի առնել անհատի պահանջը: Մեր դարաշրջանին, մեր մոլորակին նպատակասլաց մարդիկ են պետք: Իսկ դպրոցում այդպիսի մարդ դաստիարակելու համար ուսուցիչը ոգեշնչողի, աջակցողի դեր պետք է ունենա: Ուսուցչի դերը չի հանգում այսօրվա փաթեթավորված գիտելիքների հաղորդմանը: Ուսուցիչը չափահաս մարդ է, ավագ, ով երեխաների հետ է լինում, որպեսզի իր մեջ լավը փոխանցի, որպեսզի իր մեջ էլ ստեղծագործելու, երևակայելու հմտություններ զարգացնի: Այժմ երեխան դպրոցում պետք է շարժվի՝ ինքնագործելով: Երեխային պետք է նախապատրաստել ոչ թե դպրոցի, այլ բուն կյանքին: Երեխան պետք է ազատ լինի: Անհատական ազատության առաջին ակտիվ դրսևորումները պետք է այնպես ուղղվեն, որ երեխայի մեջ աստիճանաբար ինքնուրույնություն դաստիարակվի:

Այս ամենը իրականացնելու համար շատ արդյունավետ ու ինտեսիվ մոդել է ուսուցման նախագծային տեխնոլոգիան: Ծնված լինելով ազատ դաստիարակության գաղափարից՝ այսօր նախագծի մեթոդը ժամանակակից կրթական համակարգի անբաժանելի բաղադրիչն է: «Ուսումնական նախագիծային տեխնոլոգիա» ասելով՝ հասկանում ենք սովորողների ստեղծագործական հետազոտական խնդրի լուծման ցանկացած գործունեություն՝ նախապես անհայտ արդյունքով:

Այսպիսով՝ նախագիծը նպատակներին հասնելու միջոց է: Ընդ որում նպատակը կոնկրետ արդյունքում է գտնում իր արտահայտությունը և ունի ուսումնական, մեթոդական կամ գեղագիտական նշանակություն, ինչպես նաև՝ կարող է լինել գործունեության հաջողության գնահատման անկողմնակալ չափանիշ:

Նախագծային տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ծրագրային նյութի ընկալմանը, թույլ է տալիս բնականոն կերպով զարգացնել անհրաժեշտ ուսումնական ունակություններ, ձևավորել հաղորդակցային կարողություններ: Հատուկ պետք է նշել այս մեթոդի արդյունավետությունը՝ սովորողների

պատասխանատվության, ինքնուրույնության, խմբի հետ աշխատելու ունակության զարգացման գործում:

Գոյություն ունեցող մանկավարժական պրակտիկան հիմք է տալիս նախագծերը դասակարգելու հետևյալ կերպ.

- ըստ նախագծի մշակմանը մասնակցող աշակերտների թվի տարբերում են անհատական կամ խմբային նախագծեր.
- ըստ բովանդակության՝ միառարկայական կամ միջառարկայական.
- ըստ նախագծային գործունեության շարունակականության՝ նախագծերը կարող են լինել կարճաժամկետ (1-2 պարապմունք), միջին ժամկետով (1 ամիս) և երկարաժամկետ (1 ամսից մինչև 1 տարի).
- գերիշխող գործունեության ձևից կախված՝ տարբերում են. տեղեկատվական, հետազոտական, գործնական, հեռահաղորդակցական նախագծեր

Նախագծային մեթոդը առաջացել է 1920-ական թվականներին, ԱՄՆ-ում: Հեղինակն է Ջոն Դյուին: Այն կոչվել է նաև պրոբլեմների մեթոդ: Ջոն Դյուին առաջարկում է ուսուցումն հիմք ընդունել սովորողի ակտիվ գործունեությունը՝ հաշվի առնելով նրա անձնական հետաքրքրությունները կոնկրետ այդ թեմայի շուրջ: Էական նշանակություն ունի այն, որ սովորողներին առաջարկվեն իրական կյանքից վերցված խնդիրներ, որոնք կարևոր են իրենց համար: Այս խնդիրների լուծման համար սովորողին անհրաժեշտ կլինի կիրառել ինչպես մինչ այդ ունեցած գիտելիքները, այնպես էլ նոր գիտելիքներ, որոնք նա ձեռք կբերի աշխատանքի ընթացքում: Կրթական պրոցեսի նպատակ է դառնում կենսական խնդիրների լուծումը, ստեղծագործական որակների տիրապետումն ու կենսափորձի ձեռքբերումը: Նախագծային ուսուցման հիմնական նպատակն է խթանել սովորողների հետաքրքրությունը որոշակի պրոբլեմների հանդեպ և նախագծային գործունեությամբ լուծել այդ խնդիրը: Սա հնարավորություն է տալիս, որպեսզի երեխան, լուծելով այդ պրոբլեմը, ինքնուրույն ձեռք բերի գիտելիքներ: Նախագծի կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել սովորողի տարիքային առանձնահատկությունները, կարողությունները, քանի որ



յուրաքանչյուր սովորող ունի իր հմտությունների, հնարավորությունների սահմանը: Այսինքն՝ արդյունքում պետք է լուծվի խնդիր, որը ձևակերպվել է հենց սովորողների կողմից: Հաճախ մենք ինքներս ենք ձևակերպում խնդիրը, որը սովորողները պետք է լուծեն: Իսկ խնդիրը, որը մենք ձևակերպում ենք, կարող է անհատապես հետաքրքիր չլինել նրանց համար: Նախագծի թեման պետք է ձևակերպվի այնպես, որ նրանում սովորողը կարողանա տեսնել թաքնված խնդիր: Իսկ ինչպե՞ս սովորողներին օգնել, որպեսզի նրա մոտ առաջանա լուծել որևէ խնդրի: Դա կարելի է անել հարցերի միջոցով: Հարցերին սովորողները պատասխանելիս հնարավոր է չտիրապետեն բավարար տեղեկատվության: Եվ դրա համար նրանց կարելի է առաջարկել ծանոթանալ այդ նյութին:

Այս աշխատանքի հիմքում ընկած են հետոյալ սկզբունքները.

- Ձևավորել կրթական գործում ակտիվ մասնակցություն ունեցող մասնակիցների համայնք
- Ջարգացնել հետազոտական, ստեղծագործական, որոնողական հմտությունները
- Բարձրացնել ինքնագնահատականը
- Ձևավորել ոչ միայն գիտելիքներ, այլ այնպիսի հմտություններ, որոնք սովորողները կկարողանան կիրառել իրենց պրակտիկ գործունեության մեջ
- Ջարգացնել սովորողի ճանաչողական հետաքրքրությունները
- Ապահովել կյանք-կրթություն իրական կապը:

Նախագծային տեխնոլոգիան կրթական մեթոդների ամբողջությունն է, որոնք հնարավորություն են տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ՝ կոնկրետ հանձնարարություններ պլանավորելու և ինքնուրույն իրականացնելու ընթացքում: Իսկ արդյունքը լինում է տեսանելի, ներկայանալի, հրապարակության արժանի աշխատանք:

Շատ հաճախ նախագիծ են անվանում սովորողի ցանկացած ինքնուրույն աշխատանքը, ռեֆերատը, հաշվետվությունը: Այսպիսի շփոթմունքից խուսափելու համար անհրաժեշտ է հիշել, որ նախագիծը ուղղված է կոնկրետ խնդրի լուծման՝ օպտիմալ ճանապարհով հասնելով նախօրոք նախատեսվող արդյունքներին: Նախագիծը կարող է ներառել ռեֆերատ, հաշվետվություն, հետազոտություն և սովորողների ինքնուրույն աշխատանքներ՝ որպես նախագծի արդյունքին հասնելու միջոց:

Նախագիծ իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք դրույթներ.

- Սովորողին չպետք է նախագծի տեսքով առաջարկել աշխատանք, որի իրականացման համար նա չունի նախնական գիտելիքներ և հմտություններ: Այլ կերպ ասած, նա պետք է ունենա որոշակի պատրաստվածության մակարդակ:
- Նպատակին հասնելու համար կիրառել խթանիչ մեթոդներ :
- Առաջարկել գրավիչ, հետաքրքիր նյութ:
- Սովորողին զգալ, որ ինքը կարող է դառնալ բացահայտող:
- Սովորողին դարձնել ակտիվ մասնակից, հետազոտող, գործունեություն ծավալող, չէ որ նա ազատ է գործունեության ձևի ու տեսակի ընտրության մեջ:
- Մղել որոնելու, գտնելու, համեմատելու, զուգահեռներ անցկացնելու:
- Նպաստել մտածելու, ստեղծելու:
- Սովորեցնել սովորել:
- Փոխացել իր փորձը ուրիշին:

Չկա երկու նմանատիպ նախագիծ, քանի որ մասնակից աշակերտները, ուսուցիչները և հանգամանքները մշտապես տարբեր են: Նախագծային մեթոդը պահանջում է աշակերտների աշխատանքի գիտակցված ծրագրում: Ծրագրումը կատարվում է երկու տարբեր մակարդակներով: Առաջին մակարդակը վերաբերում է ամբողջ գործընթացին, որի ընթացքում նախատեսվում է, որ աշակերտին

կներկայացվեն որոշակի գիտելիքներ և կզարգացվեն որոշակի կարողություններ: Երկրորդ մակարդակը ենթադրում է անհատական նախագծերի ծրագրում, որի համար անհրաժեշտ է ուսուցչի կողմից շահագրգռվածություն և օժանդակության ցուցաբերում: Անհրաժեշտ է նշել, որ այս դեպքում խոսքի հմտությունները գերիշխող չեն, և տարբեր կարողություններ ունեցող աշակերտներ հավասարապես մասնակցում են համատեղ ընտրված խնդրի լուծմանը:

Այս մեթոդի աշխատանքների իրականացման համագործակցային բնույթն ապահովվում է ուսուցչի ղեկավարման աննշան դերը: Նա գործում է գրեթե աննկատ, իսկ համագործակցությունն իրականացվում է միայն համատեղ պլանավորման, գործողությունների և գնահատման միջոցով: Իսկ առաջադրանքների բազմազանությունն աշակերտներին հնարավորություն է տալիս դրանց մասնակցելու տարբեր ձևերով: Աշակերտները կարող են աշխատանքի իրենց բաժինն ընտրել՝ ըստ իրենց նախկին փորձի, ունակությունների և հավակնությունների: Ուսուցչի դերը նախագծի իրականացման տարբեր փուլերում կարող է փոխվել: Բոլոր փուլերում էլ նա հանդես է գալիս որպես խորհրդատու, օգնական: Նա գիտելիքներ չի փոխանցում, այլ ապահովում է սովորողի ինքնագործունեությունը, այսինքն՝ խորհուրդներ է տալիս, հետևում է ընթացքին, ուղղորդում է:

Նախագծային տեխնոլոգիան ունի իր աշխատանքային գործընթացը՝ գործունեության փուլերը.

- Նախապատրաստական փուլում ուսուցիչը առաջարկում է սովորողներին զբաղվել որևէ պրոբլեմի լուծումով, ստեղծում է շարժառիթ, տրամադրվածություն:
- Թեմայի ընտրությունը և դրա քննարկելը, (կարելի է որոշել «մտքերի տարափի» կամ «կյոբ սեղանի» կազմակերպմամբ): Այս ընթացքում պետք է պարզել, թե ինչ նպատակ է հետապնդում նախագիծը:
- Ենթաթեմաներ (ենթախնդիրներ) ընտրելը, աշակերտներին բաժանել խմբերի և բաշխել պարտականությունները:

- Հաղորդակցման ուղիներ ընտրելը (նախագծի կատարման համար անհրաժեշտ տեղեկույթի հավաքագրում և ուսումնասիրում, նախագծի նյութատեխնիկական ապահովման հարցեր նայլն):
- Աշխատանք նախագծի վրա: Այս ընթացքում ուսուցիչը հետևում է աշխատանքին, քննարկում խմբերի փոքր թեմաները, հավաքում է ենթախմբերում ստացված տվյալները, համակարգում է, վերլուծում և օգնում աշխատանքը դարձնել ներկայանալի:
- Ենթախմբերի ներկայացումները, ամփոփում, արդյունքների ձևակերպում:
- Նախագծի ներկայացում-շնորհանդես (կարելի է նաև պրեզենտացիայի ձևով):



Նախագծային աշխատանքի ժամանակ ուսուցիչը հնարավորություն ունի հետևելու սովորողի ինքնուրույն աշխատանքին, մտավոր զարգացմանը: Ուսուցիչը այս ընթացքում հնարավոր է բացահայտի այս կամ այն աշակերտի այնպիսի անձնային որակներ, այնպիսի կարողություններ, որոնք մինչ այդ չէին դրսևորվել:

Պետք է հիշել, որ նախագծի թեման հնարավորինս պետք է համապատասխանի ուսումնական գործընթացի պրոֆիլին: Պետք է հաշվի առնել նաև աշակերտների ծանրաբեռնվածությունը, հետևել որ նախագծի վրա աշխատելու ընթացքում չխախտվի ուսումնական գործընթացը:

## **ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՇԱԿՈՒՄ**

Ուսումնական նախագիծը ունի ընդհանուր նպատակ, խնդիրներ, որոնց լուծման արդյունքում հասնում են ակնկալվող արդյունքների: Հիմք ընդունելով պետական կրթական չափորոշիչները՝ նախագիծը պետք բավարարի կրթական պահանջներին:

Նախագծային ուսուցում

**Դասարան՝** Երրորդ

**Առարկա՝** Տեխնոլոգիա

**Դասի թեման՝** Խճանկար հատիկավոր բույսերով (ոսպ, ոլոռ, հնդկաձավար)

**Դասի նպատակները՝**

- Հատիկավոր բույսերի մասին գիտելիքների ձեռքբերում
- Փորձերի անցկացման առաջնային հմտությունների ձևավորում
- Ինքնուրույնության և ստեղծագործական ակտիվության զարգացում
- Համագործակցային կարողությունների և հմտությունների զարգացում

- Գեղագիտական և աշխատանքային դաստիարակություն
- Սկսած գործն ավարտին հասցնելու կարողության, աշխատասիրության և համբերատարության դաստիարակում:

**Խնդիրները՝**

- Սովորողների գործունեության միջոցով անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձևավորում
- Շրջակա միջավայրի դիտումների տվյալները գրանցելու, եզրակացություններ անելու նախնական կարողությունների ձևավորում
- Աշխատանքային գործունեության արդյունքում ուսումնական այլ խնդիրների լուծում
- Խմբով աշխատելու կարողության զարգացում:

Նախորդ դասին՝ պլանավորման փուլում, դասարանը բաժանվել էր խմբերի և յուրաքանչյուր խմբի հանձնարարվել համատեղ մշակված պլանի կետերից որոշակի առաջադրանք.

- Ընդհանուր տեղեկություններ սննդաբույսերի՝ ոլոռի, հնդկաձավարի և սիսեռի մասին
- Սննդատեսակներ տրված հատիկավոր բույսերից
- Բույսերի բուժիչ և վնասակար հատկությունները
- Բույսերի աճեցման ձևերը և հնարները:

Նախագծի վրա աշխատելիս ուսուցիչը հետևում է աշակերտների ինքնուրույն աշխատանքին, ուղղորդում նրանց դեպի ճիշտ ճանապարհ, անհրաժեշտության դեպքում տրամադրում նյութեր և տեղեկություններ:

**Դասի ընթացքը**

Խմբերը ակտիվորեն ներկայացնում են թեմայի շուրջ իրենց հավաքած տեղեկությունները, ցույց տալիս ամբողջ աշխատանքը: Խմբերից առաջինը բանավոր ներկայացնում է հավաքագրած տեղեկությունները, սլայդի միջոցով ներկայացնում բույսերը, մյուսը իրականացնում է խոհանոցային գործունեություն: Ներկայացնում է պատրաստի մի քանի ճաշատեսակ, կազմակերպում հյուրասիրություն: Երրորդ խումբը ներկայացնում է բժշկական տարրական

գիտելիքներ և խորհրդատվություն: Վերջին խումբը փոքրիկ տարրաների մեջ ցույց է տալիս տնկելու կարգը:

Գաղափարների թիմային ներկայացումից հետո երեխաները անցնում են աշխատանքի ստեղծագործական հատվածին: Արդեն անհատական աշխատում են հատիկավոր բույսերով: Պատրաստում են խճանկար՝ պատկերները ընտրելով իրենց երևակայությամբ:

Վերջում կազմակերպում ենք իրենց աշխատանքների ցուցահանդես:

**Անդրադարձ և ամփոփում** — Երեխաները, ամփոփելով նախագիծը, հայտնում են իրենց կարծիքը. ինչ տվեց մի քանի օրերի աշխատանքը, որտեղ կարող են օգտագործել իրենց ձեռք բերած գիտելիքներն ու փորձը և արդյոք կցանկանան աշխատել մի նոր նախագծի շուրջ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վերլուծելով և ուսումնասիրելով, թե ինչ է նախագծային տեխնոլոգիան, ևս հանգեցի այն եզրակացության, որ մանկավարժական այս տեխնոլոգիան ուսումնադաստիարակչական գործընթացում հանդիսանում է այն հզոր զենքը, որին հստակ տիրապետող մանկավարժը կարողանում է ցանկացած ժամանակ, ցանկացած իրավիճակում սովորողի մոտ զարգացնել ինքնագործունեություն: Այս աշխատանքի ընթացքում բոլոր սովորողները ընդգրկվում են ուսումնառության մեջ: Ընդ որում, յուրաքանչյուրն իր անհատական գործն է անում, տեղի է ունենում մտքերի փոխանակում: Եվ դա տեղի է ունենում բարի և փոխօգնության միջավայրում, որը նպաստում է ազատ արտահայտվելուն, նոր գիտելիք ստանալուն, զարգացնում է իմացական գործընթացը, մշակում համագործակցում: Պետք է հիշել, որ նախագծի կազմակերպման ընթացքում կարևոր է հաշվի առնել սովորողի տարիքային առանձնահատկությունները, կարողությունները, քանի որ յուրաքանչյուր սովորող ունի իր հմտությունները, հնարավորությունների սահմանը:

Նախագծային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման ժամանակ աշխատում են բոլոր սովորողները: Այսպիսի ուսուցման ընթացքում աշակերտները սովորում են մտածել, տեղեկատվության միջոցով ստանալ նոր գիտելիքներ, քննարկել կարծիքներ, ընդունել կշռադաստված որոշումներ, մասնակցել բանավեճերի և այլն: Նախագծային ուսուցման մեթոդները սովորողների մոտ զարգացնում են նաև ճանաչողական, ստեղծագործական հմտություններ, հնարավորություն են տալիս հավաքած նորությունները իմի բերել, ներկայացնել իրենց մտածածով:

Այս տեխնոլոգիան կենտրոնանում է առօրյա կյանքի խնդիրների վրա և կարևորում մասնակիցների փորձառությունը: Նախագծի բուն նպատակներից մեկը սովորողի մեջ ուսումնասիրվող նյութի վերաբերյալ հետաքրքրություն առաջ բերելն է: Աշխատանքը պետք է զարգացնի սովորողի ճանաչողական ունակությունները, նպաստի բարոյական հատկանիշների ձևավորմանը, առաջացնի սեր հայրենիքի, նրա մշակույթի, պատմության, ինչպես նաև հարգանք հարևան ժողովուրդների նկատմամբ:

Նախագծային տեխնոլոգիայով աշխատելը լավ է նաև նրանով, որ մինչ նախագիծն սկսելը որոնողական և ստեղծագործական աշխատանք են տանում և՛ սովորողները, և՛ ուսուցիչը: Արդյունքում ստացվում է հետաքրքիր, ուսուցողական, ստեղծագործ աշխատանք, որը կարելի է ներկայացնել դպրոցին՝ սովորողներին և մանկավարժական կոլեկտիվին:

Իմ ձեռքբերումներից մեկը սովորողների հետ նախագծային ուսուցման մեթոդով աշխատելն էր: Նախագծային ուսուցումը հետաքրքիր է դարձնում ուսումնական ողջ գործընթացը, նպաստում սովորողի ստեղծագործական և հետազոտական հմտությունների զարգացմանը: Բացի սրանից երեխան, աշխատանքի արդյունքը տեսնելով, մեծ ոգևորություն է ապրում, կիրառում իր պատրաստած իրը կենցաղում, ցանկանում է տարբերվել շրջապատից և լինել առանձնահատուկ: Այս աշխատանքը նպաստում է նաև գեղագիտական ճաշակի բարձրացմանը:

Հասկանալով նախագծային մեթոդով աշխատելու սկզբունքները՝ հետագա աշխատանքները պլանավորելիս կկարևորեմ ոչ միայն մյուս մանկավարժական



տեխնոլոգիաները, այլև անհատական աշխատանքը սովորողի հետ՝ նախագծային տեխնոլոգիայի միջոցով, քանի որ յուրաքանչյուր սովորող ունի իրեն հատուկ առանձնահատկություններ: Կփորձեմ գտնել և ներկայացնել սովորողի անհատական կերպարը, քանի որ ամեն մեկն ունի իր մեջ թաքնված հետաքրքիր և գունեղ աշխարհ: Հուսով եմ, որ հաջորդ աշխատանքներս կլինեն առավել հաջողակ և հետաքրքիր: Այս աշխատանքի շնորհիվ ես կկարողանամ ավելի լավ ճանաչել աշակերտներին և, ինչու չէ, նաև ինքս ինձ:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Ե., 2012:
2. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Հ., Վարելա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում, Ձեռնարկ մանկավարժների և կրթության կազմակերպիչների համար, Երևան, «Նոյան տապան» 2005
3. Ամիրջանյան Յու., Ժամանակակից դիդակտիկա, Լույս, Եր., 1990
4. Պետրոսյան Հ. Հ., Մանկավարժական տեխնոլոգիայի գորառնային կառուցվածքը, Միս. Գոշ № 3, 2007
5. Նավասարդյան Ս., Սահակյան Լ., Նախագծային մեթոդը որպես ստեղծագործական մտածողության զարգացման միջոց, Մանկավարժություն 5/2013
6. Ա. Բլեյան, Նոր ուղի, 2000
7. Կ. Թորոսյան, Դասերի կատարելագործման ժամանակակից պահանջներ, Նախաշավիղ, 1/2001